

ՀԱԳՄՉ 08.20

Երկրորդ հրատարակություն
1 հունվարի 2003թ.
Ներառում է փոփոխություն 1-ը

Տեխնիկական հետազոտություն

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախազգուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱՕ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱՕ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՕ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	1
4. Տեխնիկական հետազոտում՝ նպատակ և շրջանակներ	1
5. Ականագերծման պահանջներ.....	3
6. Տեխնիկական հետազոտման ժամանակ հավաքվող տեղեկություն	4
7. Նշագրում	5
7.1. Վտանգի նշագրում	5
7.2. Հետազոտական նշագրում.....	5
7.2.1. Կողմնորոշիչ ուղենիշներ /ցուցանակ/.....	5
7.2.2. Նիվելիրային նշագիր	6
7.2.3. Շրջադարձ.....	6
7.2.4. Միջանկյալ կետ.....	6
8. Փաստաթղթերի կազմում	6
9. Միջազգային պայմանագրեր.....	7
10. Պատասխանատվություններ և պարտավորություններ.....	7
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր	9
Հավելված Բ (Ճանաչողական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ.....	10
Հավելված Դ (Տեղեկատվական) Հետազոտական նշագրում.....	15
Փոփոխությունների գրանցում	21

Նախարան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականագերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականագերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականագերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականագերծման ծառայության (ՄԱԿԱՕ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաճեղքների և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱՕ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականագերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Հայտնի կամ կասկածվող վտանգավոր տարածքների վերաբերյալ մանրամասն տեխնիկական և տեղագրական (տոպոգրաֆիկ) տեղեկությունների հավաքագրումը կատարվում է տեխնիկական հետազոտության միջոցով: Այդպիսի տարածքները նախապես առանձնացված են լինում Հակաականային գործողությունների ընդհանուր գնահատման (ՀԱԳԸԳ) գործընթացի շրջանակներում: Տեխնիկական հետազոտության հիմնական նպատակը բավարար տեղեկություններ հավաքելն է, որը թույլ կտա առավել ճշգրիտ սահմանել ականագերծման պահանջները, այդ թվում ականագերծման ենթակա տարածքները, ականագերծման խորությունը, տեղական գրունտի վիճակը և բուսականության առանձնահատկությունները:

Տեխնիկական հետազոտության միջոցով ձեռք բերված տեղեկություններն ամփոփվում են Հետազոտության հաշվետվության մեջ, որը ծառայում է որպես տեխնիկական մասնագիր ականագերծման հետագա առաջադրանքի պլանավորման և կառավարման համար: Տեխնիկական հետազոտության արդյունքում կարող է կատարվել շրջագծի նշագրում՝ նվազեցնելու համար վտանգավոր տարածք կատարվող ոչ միտումնավոր մուտքի ռիսկը: Տեխնիկական հետազոտության արդյունքում կարող են ստացվել տվյալներ Ականների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) ցանկացած ընթացիկ ծրագրի համար: Եթե ականագերծումը չի կատարվում անմիջապես տեխնիկական հետազոտությունից հետո, ապա հետազոտության նշագրերը պետք է ապահով կերպով պահպանվեն տվյալ տարածքում: Այդպիսի նշագրերը թույլ կտան հետագայում ճշգրիտ և անվտանգ կերպով գտնել վտանգավոր տարածքները:

“Տեխնիկական հետազոտություն” տերմինը համընդհանուր կիրառում չունի: Ականագերծման գործողությունների ազգային մարմինները (ԱԳԱՄ) և ականագերծող կազմակերպություններն, ինչ խոսք, կատարում են հայտնի կամ կասկածվող վտանգավոր տարածքների մանրամասն ստուգում, համապատասխան փաստաթղթերի կազմում և նշագրում հենց այնպես, ինչպես դրանք սահմանված են սույն չափորոշիչում, որն ընդհամենը հետազոտում-ականագերծում միասնական գործառնության ապահովման առաջին փուլն է: Անկախ նրանից, թե ինչպես կնկարագրվի “տեխնիկական հետազոտությունը”, այն ականագերծման գործընթացի կարևորագույն մասերից է և ապահովում է անվտանգ, արդյունավետ և օպերատիվ ականագերծման համար անհրաժեշտ տեղեկություններ:

Տեխնիկական հետազոտություն

1. Ծավալ

Այս չափորոշիչը ուղղություն է տալիս տեխնիկական հետազոտության պահանջների վերաբերյալ և մանրամասն սահմանում է տեխնիկական հետազոտություն կատարող գերատեսչությունների և կազմակերպությունների պարտականությունները և պատասխանատվությունները:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն չափորոշիչում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը ներկայացված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

- ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչն ամբողջությամբ բավարարելու համար.
- բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.
- գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Հիմնականում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՄ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը:

4. Տեխնիկական հետազոտություն՝ նպատակ և շրջանակներ

Տեխնիկական հետազոտությունը կասկածվող վտանգավոր տարածքներին վերաբերող նպատակային գործողություն է և, որպես կանոն, իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Տեխնիկական հետազոտությունը կատարվում է հայտնի կամ կասկածվող վտանգավոր տարածքների վերաբերյալ մանրամասն տեխնիկական և տեղագրական տեղեկություններ հավաքելու նպատակով: Այդպիսի տարածքները սովորաբար նախապես առանձնացված են լինում ՀԱԳԸԳ ժամանակ:

Տեխնիկական հետազոտության հիմնական նպատակը բավարար տեղեկություններ հավաքելն է, որը թույլ կտա առավել ճշգրիտ սահմանել ականագերծման պահանջները, այդ թվում ականագերծման ենթակա տարածքները, ականագերծման խորությունը, տեղական գրունտի վիճակը, ինչպես նաև բուսականության առանձնահատկությունները: Դա թույլ է տալիս ձևակերպել առաջադրանքի պահանջը և ապահովել, որ հետագա գործողությունները կատարվեն ճշգրիտ, անվտանգ և օպերատիվ կերպով:

Տեխնիկական հետազոտությունը ՀԱԳԸԳ գործընթացի կարևոր քայլ է և պետք է կատարվի նախքան ականագերծման աշխատանքների փաստացի մեկնարկը, երբ հակաականային գործողությունների ծրագրի տեղեկատվության կառավարման համակարգում առկա գերակայությունների ցանկից ընտրվում են աշխատանքային տարածքները: Տեխնիկական հետազոտության միջոցով ձեռք բերված տեղեկություններն ամփոփվում են Հետազոտության հաշվետվության մեջ, որը ծառայում է որպես տեխնիկական մասնագիր ականագերծման հետագա առաջադրանքի պլանավորման և կառավարման համար: Ավելի մանրամասն տեղեկությունների համար տես ՀԱԳՄՉ 09.10՝ Ականագերծման պահանջները: Գաղափարն այն է, որ լիաժեք իրականացման դեպքում, երբ հակաականային գործողությունների ծրագիրը հասունանում է և տեղեկատվություն կուտակում, տեխնիկական հետազոտության թիմն աշխատում է՝ մինչև ականագերծող թիմերը կսկսեն իրենց գործողությունները: Դա թույլ է տալիս հակաականային գործողությունների կենտրոններին (ՀԳԿ) սահմանել ականագերծման պահանջները, պլանավորել հետագա քայլերը և կազմել աշխատանքային ծրագրեր՝ ականագերծման կազմակերպությունների կողմից իրականացվելու համար: Այն նաև ապահովում է, որ ականագերծման ռեսուրսներն օգտագործվեն առավել արդյունավետ ու նպատակային ձևով և յուրաքանչյուր խնդրի դեպքում օգտագործվեն ճիշտ ռեսուրսները:

Տեխնիկական հետազոտությունը կարող է կատարվել երկու եղանակով՝ արագ և ավելի հանգամանալից՝

- ա. Երբեմն տեխնիկական հետազոտությունն ականագերծման նախագծի ընդամենը առաջին քայլն է, իսկ ականների և ՉՁ ներկայացրած վտանգի ավելի մանրամասն տեխնիկական պատկերը կազմվում է ականագերծման աշխատանքների ընթացքում: Այս դեպքում տեխնիկական հետազոտությունը կատարվում է նախքան ականագերծումը և նպատակ ունի կազմել մեկ կոնկրետ տարածքի պլանը;
- բ. Սովորաբար տեխնիկական հետազոտությունը կատարվում է ավելի լայնածավալ պլանավորումից հետո, որպեսզի ծրագիրն առավելագույնս նպաստի ՀԱԳԸԳ-ի արդյունքում կատարվող ցանկացած հետազոտության (արտակարգ իրավիճակների, ազդեցության և այլն) ժամանակ սահմանված ականապատման խնդրի լուծմանը: Այս կերպ տեխնիկական հետազոտությունը նպաստում է թե աշխատանքային ծրագրի կազմմանը և թե կոնկրետ աշխատանքային տարածքի գծագրմանը: ՀԱԳԸԳ-ն տեղեկությունների հավաքագրման և գնահատման շարունակական գործընթաց է, իսկ տեխնիկական հետազոտությունը, որը կազմում է ՀԱԳԸԳ-ի մասը, վերաբերում է կոնկրետ ականագերծվող տարածքի որոշման և ականագերծման պլանի կազմման համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրմանը: Տեխնիկական հետազոտության արդյունքում ստացված տեղեկություններն անհրաժեշտ են առաջադրանքի պահանջները կազմելու համար՝ նախքան այն կսահմանվի հակաականային գործողությունների մարմնի կողմից: Առաջադրանքի պահանջներում նշվում են ականագերծման ենթակա տարածքը, ականագերծման խորությունը, ինչպես նաև մոնիտորինգի և ստուգազննումների պահանջները: Բացի այդ, տեխնիկական հետազոտությունը հնարավորություն է տալիս՝ 1) հաստատել առկա տվյալները, 2) գնահատել ռեսուրսների տեսակը և քանակը՝ տվյալ տարածքի համար լավագույնս համապատասխանեցնելու համար և 3) կազմել այդ տարածքի ականագերծման պլան, որը ներառում է տարածքի կրճատումը, ականագերծման և նշագրման պահանջներն այնպիսի ձևով, որը թույլ կտա աշխատանքի ընթացքում կիրառել անվտանգ ընթացակարգեր և կատարել վերջիններիս մոնիտորինգ:

Յուրաքանչյուր տեխնիկական հետազոտության շրջանակները և խորությունը կախված է բազմաթիվ գործոններից, ինչպիսիք են առկա տեղեկությունների (ինչպես օրինակ ՀԱԳԸԳ ընթացքում կատարած ցանկացած հետազոտության կամ տվյալների հավաքագրման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները) ճշգրտությունը և ամբողջականությունը, անվտանգության տեղական իրավիճակը, հետազոտության համար պատրաստ մարդկային և ֆինանսական ռեսուրսները: Այն կախված է նաև վտանգների և վտանգավոր տարածքների ձևից: Օրինակ գործի կողմից ստանդարտ ընթացակարգերի համաձայն ականապատված դաշտի տեխնիկական հետազոտությունը կտարբերվի այն տեխնիկական հետազոտությունից, որը կատարվում է, եթե դա անկանոն ականապատված դաշտ կամ ջրային աղբյուր է, որի շուրջ տարերայնորեն տեղադրված են հակահետևակային ականներ (ՀՀԱ) և ական-թակարդներ՝ տեղի ազգաբնակչությանը վնասելու նպատակով:

Տեխնիկական հետազոտությունը պետք է նաև ուսումնասիրի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև խմբագրի ԳՀԸԳ-ի նախնական փուլում աշխատանքների ընդհանուր պլանավորման նպատակով հավաքագրած տեղեկությունները: Դրանց թվում են այնպիսի տվյալներ, ինչպիսիք են տեղական անվտանգությունը, ենթուղիները, լանդշաֆտը, ենթակառուցվածքը և համապատասխան բուժհաստատությունների առկայությունը: Տեղին է ուսումնասիրել նաև վտանգավոր տարածքների տեղական սոցիալ-տնտեսական ազդեցությունը՝ հաստատելու համար հետագա ականազերծման աշխատանքների անհրաժեշտությունը և հրատապությունը:

Տեխնիկական հետազոտությունը պետք է կատարվի հատուկ որակավորում ունեցող ականազերծող կազմակերպությունների կողմից, որոնք ԱԳԱՄ-ի կողմից հավատարմագրված են տեխնիկական հետազոտություն կատարելու համար: Հակաականային գործողությունների մարմինը պետք է պահանջի, որ համապատասխանող կազմակերպությունները ապահովեն, որպեսզի հավաքագրած և ուսումնասիրված տեղեկությունները օգնեն պլանավորել, մշակել և/կամ խմբագրել աշխատանքային ծրագրերը:

5. Ականազերծման պահանջներ

ՀԱԳՄՉ 09.10-ում սահմանվում են ականների և չպայթեցված զինամթերքի (ՉՁ) ականազերծման պահանջները և որակի համակարգը (այսինքն կազմակերպությունները, ընթացակարգերը և պարտականությունները), որոնք անհրաժեշտ են որոշելու համար, որ տարածքը ականազերծվել է ականազերծող կազմակերպության կողմից՝ վերջինիս պայմանագրային պարտավորությունների համապատասխան:

Պայմանագրային պարտավորությունները պետք է սահմանեն ականազերծման ենթակա տարածքը և ականազերծման խորությունը: Վերջինս որոշվում է տեխնիկական հետազոտության կամ որևէ այլ վստահելի կազմակերպության տված տեղեկությունների միջոցով, որոնք վերաբերում են ականների և ՉՁ վտանգների աստիճանի մասին և նախատեսված հողի օգտագործման գնահատմանը:

Ականների և ՉՁ վտանգների հավանական խորության մասին տեղեկացված որոշում կայացնելու համար հարկավոր է հասկանալ ականների տեղադրման տակտիկական և օգտագործման զինամթերքի տեսակները, և արդյոք եղել է հողի սողանք կամ գրունտի ներսում ականների ուղղահայաց շարժ: Կարող է անհրաժեշտ լինել նաև կատարել մեկ կամ մի քանի նմուշային տարածքների ականազերծում:

Հարկավոր է կատարել հողի անալիզ՝ պարզելու համար հանքանյութերի և մետաղական ջարդոնի առկայության աստիճանը, որից և կախված կլինի ականի դետեկտորի ընտրությունը: Հարկավոր է կատարել հողի բաղադրության և մեխանիկայի հետազոտություն՝ մեխանիկական սարքավորումների օգտագործման հնարավորությունը պարզելու համար: Բացի այդ, հարկավոր է ստուգել փոխադրամիջոցների ենթուղիների հնարավորությունները, հատկապես այն դեպքերում, երբ հարկավոր են ծանր մեխանիկական սարքավորումներ:

6. Տեխնիկական հետազոտության ժամանակ հավաքվող տեղեկություն

Տեխնիկական հետազոտությունը ականների և ՉՁ գործողությունների պլանավորման տեղեկությունների գլխավոր աղբյուրն է և, որպես կանոն, նախատեսում է հատուկ բնույթի տվյալների հավաքագրում, մուտք ականապատ տարածք և կասկածվող տարածքի քարտեզագրում: Այս առումով հետազոտությունն օգնում է՝

- ա. Տարածքային և տեղական պլանավորման նպատակով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ;
- բ. Տարածքի հետագա կրճատման, ականագերծման և նշագրման պլանավորման համար տրամադրել տեղեկություններ;
- գ. Ականագերծող միջոցների օգտագործման գրաֆիկը կազմելու նպատակով բազա տրամադրել՝ ժամանակը կրճատելու համար;
- դ. Արագացնել ականագերծման գործողությունները կոնկրետ տարածքի վերաբերյալ ճշգրիտ և ժամանակին տվյալների տրամադրման միջոցով:

Տեխնիկական հետազոտության ժամանակ հարկավոր է հավաքել հետևյալ տեղեկությունները.

- ա. Ականների և ՉՁ առկայության հաստատումը;
- բ. ՀԱԳԸԳ գործընթացին նպաստելու նպատակով հավաքագրված տեղեկությունների հաստատում;
- գ. Գրունտի գնահատում՝ հողի, մետաղի աղտոտման, բուսականության և զոգավորության առումով;
- դ. Տարածքի որոշումը՝ չափերի առումով, որը պետք է նկարագրված լինի անկյուններով և կորդինատներով;
- ե. Առաջարկվող խորությունն ըստ տարածքի, որտեղ պետք է կատարվի ականագերծում: Ականագերծման փաստացի խորությունը որոշվում է ԱԳԱՄ-ի կողմից բոլոր համապատասխան գործոնները հաշվի առնելուց հետո;
- զ. Ականագերծման համար անհրաժեշտ ռեսուրսները ըստ սահմանված տարածքների, ինչպես նաև գնահատված ժամանակը ձեռքով կատարվող աշխատանքների, մեխանիկական սարքավորումներով աշխատանքների, վարժեցված շներով աշխատող թիմերի, պայթուցիկ զինամթերքի վնասագերծման (ՊԶՎ) թիմերի կողմից աշխատանքների իրականացման համար¹:

Բացի վերը նշված տեղեկություններից, պետք է կազմվի մանրամասն սխեմատիկ քարտեզ, որը տրամադրվելու է առաջադրանքը կատարող ականագերծող կազմակերպությանը: Մխեմատիկ քարտեզը պետք է պարունակի տեղեկություններ հետևյալի վերաբերյալ՝

- ա. Հետազոտման արահետները (եթե օգտագործվելու են) և դեպի տարածք մուտքի հնարավոր անվտանգ ուղիները;
- բ. Նիվելիրային նշագիրը, նշաձողերը, շրջադարձերը և միջանկյալ կետերը, ըստ անհրաժեշտության;
- գ. Նիվելիրային կետից և շրջադարձերից հեռավորությունը և դրանց կոորդինատները;
- դ. Տեսանելի ականների/ՉՁ գտնվելու վայրը, ականի տեսակը (եթե հայտնի է);
- ե. Տեխնիկական հետազոտության ժամանակ ոչնչացված ականների, ՉՁ կամ այլ սարքերի գտնվելու վայրը;

1. Դա կախված կլինի առաջարկվող ականագերծման խորությունից: Ռեսուրսների գնահատումը կփոփոխվի, եթե ԱԳԱՄ-ը կատարի ականագերծման այլ խորություն:

- զ. Աչքի ընկնող բնական առանձնահատկություններ, ինչպես օրինակ բլուր, գետաբերան, թփուտ և այլն;
- է. Վտանգավոր տարածքի ներսում գտնվող աչքի ընկնող տեխնածին առանձնահատկություններ (տներ, գերեզմանոց, ամրաշինություն, ջրանցք, ճանապարհ, բլուր, գետ և այլն):

Անհրաժեշտ տեղեկությունները հավաքելու համար, հաճախ կարող է պետք լինել մուտք գործել վտանգավոր տարածքներ՝ կտրելով հետազոտման արահետները և մտնելով կասկածվող տարածք: Տեղեկությունները հավաքելուց և փաստաթղթավորելուց հետո այն պետք է վերադարձվի հակաականային գործողությունների մարմնին, որպեսզի վերջինս մուտքագրի այն ականների մասին տվյալների բազայում: Դա կօգնի ականագերծող կազմակերպությունների աշխատանքների ծրագրերը և առաջադրանքի պահանջները կազմելիս: Առաջադրանքի պահանջներում մանրամասն նկարագրվում են ականագերծման պահանջները (կոնկրետ տարածքները և խորությունը), օգտագործվող ռեսուրսների տեսակները և քանակը, տվյալ առաջադրանքի կատարման տևողությունը:

7. Նշագրում

7.1. Վտանգի նշագրում

Ականների և ՉՁ նշագրումը կատարվում է վտանգի մասին տեղական ազգաբնակչությանը պարզ և հստակ ձևով զգուշացնելու, իսկ հնարավորության դեպքում ֆիզիկական խոչընդոտներ տեղադրելու նպատակով՝ վտանգավոր տարածք ոչ միտումնավոր մուտքը կրճատելու նկատառումներից ելնելով:

Հարկավոր է կիրառել նշագրման մշտական համակարգեր՝ նշելով ականների և ՉՁ ունեցող այն վտանգավոր տարածքների արտաքին սահմանը, որոնց անհապաղ ականագերծումը դեռևս նախատեսված չէ: Հարկավոր է համադրել նշագրերը, նշանները և ֆիզիկական խոչընդոտները: Ժամանակավոր նշագրման համակարգերի միջոցով առանձնացվում է այն վտանգավոր տարածքների արտաքին սահմանը, որտեղ նախատեսվում է անհապաղ ականագերծում կատարել:

Ականների և ՉՁ վտանգի նշագրման համակարգը մշակելիս հարկավոր է հաշվի առնել ականապատ տարածքում առատորեն գտնվող տեղական նյութերը և նշագրման ժամկետը: Վտանգի նշագրման մշտական և ժամանակավոր համակարգերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ՀԱԳՄՉ 08.40-ում:

7.2. Հետազոտական նշագրում

Տեխնիկական հետազոտությունը նախատեսում է ֆիզիկական հետազոտության նշագրերի և ցուցիչների օգտագործում և արձանագրում՝ օժանդակելու համար հետագա ականագերծման գործողություններին:

(Նշում. Լրացուցիչ ֆիզիկական նշագրերը և ցուցիչները օգտագործվում են ականագերծման ժամանակ, ինչպես օրինակ կոորդինատի սկիզբը, բազային գիծը, մեկնարկային գծերը և ականագերծման գծերը: Ականագերծման ժամանակ օգտագործվող նշագրման ձևերը ներկայացված չեն այս չափորոշիչում:)

7.2.1. Կողմնորոշիչ ուղենիշեր

Կողմնորոշիչ ուղենիշը (ԱԳՏԿՀ նյութերում կիրառվում է 'ցամաքային ուղենիշ' տերմինը) ամրակցված նշաձող է, որը տեղադրվում է վտանգավոր տարածքից դուրս որոշ հեռավորության վրա: Դրանք պետք է լինեն հեշտությամբ ճանաչվող և մշտական օգտագործման նշաններ (ինչպես օրինակ խաչմերուկներ, կամրջի կամարակալ), որոնք կարող են օգտագործվել մեկ կամ ավելի մեկնարկային կետեր տեղափոխվելու համար: Կողմնորոշիչ ուղենիշի կորդինատները հետազոտվում են GPS (տեղորոշման միջազգային համակարգի) կամ հետադարձ հատման միջոցով: Ավելի մանրամասն նկարագրության համար տես Հավելված Դ:

7.2.2. Նիվելիրային նշագիր

Նիվելիրային նշանգիրը ամրակցված տեղեկատու նշան է, որն օգտագործվում է նշագրված վտանգի կամ վտանգավոր տարածքի տեղը գտնելու համար: Այն, սովորաբար հարկավոր է տեղադրել վտանգավոր տարածքից դուրս կարճ հեռավորության վրա: Նիվելիրային նշագրի անհրաժեշտությունը չկա, եթե կողմնորոշիչ ուղենիշը բավականաչափ մոտ է վտանգավոր տարածքի շրջագծին: Կողմնորոշիչ ուղենիշը պետք է հետագուովի GPS կամ հետադարձ հատման միջոցով: Ավելի մանրամասն նկարագրության համար տես Հավելված Դ:

7.2.3. Շրջադարձ

Շրջադարձը գետնի վրա ամրակցված կետ է և ցույց է տալիս վտանգավոր տարածքի շրջագծի ուղղության փոփոխությունը: Այն պետք է հստակորեն նշագրվի և գրանցվի: Շրջադարձի հետագոտության նշագրերը պատաստվում են կայուն կամ կիսակայուն նյութից և տեղադրվում կամ խրվում են հողի մեջ: Հողում թաղված մետաղական առարկաները կարող են օգտագործվել ուժեղացնելու համար բոլոր շրջադարձերի նշագրումը՝ հետագայում մշտապես դրանցից տեղեկանալու նպատակով: Ավելի մանրամասն նկարագրության համար տես Հավելված Դ:

7.2.4. Միջանկյալ կետ

Վտանգավոր տարածքի շրջագծում հետագոտության նշագրերի միջև հեռավորությունը չպետք է գերազանցի 50 մետրը: Միջանկյալ կետի հետագոտության նշագրերը պետք է օգտագործվեն միմյանցից 50մ հեռավորությունը գերազանցող շրջադարձերի միջև: Դրանք պատաստվում են կայուն կամ կիսակայուն նյութից և տեղադրվում կամ խրվում են հողի մեջ: Հողում տեղադրված մետաղական առարկաները կարող են օգտագործվել ուժեղացնելու համար բոլոր միջանկյալ կետերի նշագրումը՝ հետագայում մշտական դրանցից տեղեկանալու նպատակով: Ավելի մանրամասն նկարագրության համար տես Հավելված Դ:

8. Փաստաթղթերի կազմում

Տեղեկությունները պետք է հավաքագրվեն և գրանցվեն սիստեմատիկ ձևով: Հնարավորության դեպքում հարկավոր է կիրառել ստանդարտ և հաստատված տեղեկատվության կառավարման համակարգեր և ԱՏՀ, ինչպես օրինակ ԱԳՏԿՀ: Տեխնիկական հետագոտության շրջանակներում ԱԳՏԿՀ տվյալների հավաքագրման աղյուսակների մասին տեղեկությունները ներկայացված են Հավելված Ե-ում:

Վտանգավոր տարածքները նշելու, մասնավորապես կողմնորոշիչ ուղենիշերը (կամ ցամաքային ուղենիշները) նշագրելու համար հարկավոր է օգտագործել օբյեկտների գտնվելու տեղերը ցույց տվող սովորական քարտեզներ: Այս տեղեկատվությունը պետք է թվայնացվի ԱՏՀ-ի միջոցով կամ նշագրվի տոպոգրաֆիկ քարտեզի, արբանյակային պատկերի կամ հետքի վրա: ԱՏՀ կամ տոպոգրաֆիկ քարտեզների բացակայության դեպքում, այդ տեղեկությունները կարող են գրանցվել տեղում կազմված քարտեզների վրա:

Վտանգավոր տարածքի սխեմատիկ քարտեզը պետք է բավարար տվյալներ պարունակի հետագոտության նշագրերի և դրանց տեղադրվածության և վտանգի նշագրման համակարգի վերաբերյալ: Հարկավոր է ներառել նաև այլ համապատասխան տեղեկություններ, որոնք կարող են օգնել հետագա ականագրեման գործողությունների կատարմանը:

Տեխնիկական հետագոտության ժամանակ արձանագրած տեղեկությունները կազմում են ականագրեմող կազմակերպությանն առաջադրանք ներկայացնելու, իսկ հետագայում նաև ականագրեմված տարածքը ԱԳԱՄ-ին հանձնելու համար պահանջվող փաստաթղթերի կարևոր մասը (տես ՀԱԳՄՉ 08.30):

9. Միջազգային պայմանագրեր

Երկու միջազգային պայմանագրեր հատուկ պարտավորություն են առաջադրում ականապատ տարածք ունեցող պետություններին (որոնք պայմանագրի անդամ երկրներ են)՝ կապված ականապատ տարածքների հետազոտության և նշագրման հետ: Դրանք են՝

ՄԱԿ-ի “Զենքի սովորական տեսակների մասին կոնվենցիայի” փոփոխված 2-րդ արձանագրությունը (ՓԱ II) պահանջվում է, որ “... հարկավոր է ստանձնել բոլոր խելամիտ նախագրուշական միջոցառումները պաշտպանելու համար քաղաքացիներին ականների, ական-թակարդների և այլ սարքավորումների ազդեցությունից”:

Հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրության և տեղափոխման արգելման և դրանց ոչնչացման մասին կոնվենցիայի (հայտնի է որպես Օտտավայի կոնվենցիա կամ Ականների Արգելման Մասին Պայմանագիր) Հոդված 5.2-ի համաձայն յուրաքանչյուր անդամ պետություն պետք է “... հնարավոր ամեն ջանք գործադրի իր իրավասության կամ հսկողության տակ գտնվող այն տարածքները հայտնաբերելու համար, որտեղ կան հակահետևակային ականներ կամ կասկածվում է դրանց առկայությունը և, հնարավորինս արագ ապահովել, որ իր իրավասության կամ հսկողության տակ գտնվող ականապատված տարածքներում տեղադրված հակահետևակային ականները շրջագծով նշագրվեն, ենթարկվեն մոնիտորինգի և պաշտպանվեն ցանկապատման միջոցով կամ այլ եղանակով՝ ապահովելու համար քաղաքացիների մուտքի արդյունավետ բացառումը մինչև այդ տարածքում տեղադրված բոլոր հակահետևակային ականների ոչնչացումը”:

ՓԱ II և Օտտավայի պայմանագիրը պարտավորեցնում են ականապատ տարածքներ ունեցող այն երկրների կառավարություններին, որոնք նաև այդ պայմանագրերից մեկի կամ երկուսի անդամ պետություններ են, ապահովել, որ իրենց իրավասության կամ հսկողության տակ գտնվող բոլոր ականապատված տարածքները մանրագնին կեպով հետազոտվեն, շրջագծով նշագրվեն ցանկապատի տեղադրման կամ այլ եղանակով: Այդպիսի նշագրումը և ցանկապատումը, որպես կանոն, կազմում են տեխնիկական հետազոտության մասը:

10. Պատասխանատվություններ և պարտականություններ

1.1. Հակաականային գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը պետք է՝

- ա. Հավատարմագրի տեխնիկական հետազոտություն կատարելու համար կազմակերպությունների պիտանիությունը;
- բ. Կազմի և հրատարակի որակի ապահովման (ՈԱ) և որակի հսկողության (ՈՀ) չափորոշիչներ և ուղեցույցներ, որոնք պետք է կիրառվեն տեխնիկական հետազոտության պայմանագրերի և համաձայնագրերի համար;
- գ. Օգտագործի տեխնիկական հետազոտության միջոցով ստացված տեղեկությունները առաջադրանքի պահանջների և աշխատանքային ծրագրերի կազմման նպատակով;
- դ. Կազմի և հրատարակի վտանգի նշագրման համակարգերի ստեղծման և ձևավորման չափորոշիչներ, որոնք կօգտագործվեն ականազերծման ազգային նախագծերում և կուղղորդեն տարածքային ու տեղական իշխանություններին ականապատ տարածքների նշագրման համակարգերի պահպանման հարցում;
- ե. Կազմի և հրատարակի հետազոտության նշագրման չափորոշիչներ;
- զ. Կազմի և հրատարակի տեխնիկական հետազոտությունների փաստաթղթերի կազմման չափորոշիչներ;
- է. Պահպանի փաստաթղթերը և դրանք տրամադրի իշխանություններին, կազմակերպություններին և տեղի ազգաբնակչությանն՝ ըստ պահանջի:

1.2. Հետազոտող կազմակերպություն

Տեխնիկական հետազոտություն կատարող կազմակերպությունը պետք է՝

- ա. Մտանա տեխնիկական հետազոտություն իրականացնելու հավատարմագիր (ԱԳԱՄ-ի կողմից);
- բ. Տեխնիկական հետազոտության, այդ թվում նշագրման ընթացքում կիրառի ազգային չափորոշիչներ: Ազգային չափորոշիչների բացկայության դեպքում, հետազոտող կազմակերպությունը պետք է կիրառի ՀԱԳՄՉ չափորոշիչները կամ իր հետ կնքված պայմանագրում կամ համաձայնագրում սահմանված չափորոշիչները;
- գ. Հավաքի անհրաժեշտ տեղեկություն, ինչպես նկարագրված է համապատասխան տեխնիկական հետազոտության ձևում;
- դ. Պահպանի և տրամադրի փաստաթղթեր, որոնք սահմանված են ԱԳԱՄ-ի կողմից;
- ե. Ըստ անհրաժեշտության, կատարի հետազոտված տարածքի պաշտոնական հանձնում ականագերծող կազմակերպությանը:

ԱԳԱՄ-ի կամ մարմինների բացակայության դեպքում հետազոտող կազմակերպությունը պետք է ստանձնի լրացուցիչ պատասխանատվություններ, որոնց թվում են՝

- գ. Համաձայնեցնի նշագրման ընդհանուր չափորոշիչները այլ հետազոտող կազմակերպությունների հետ, որոնք գործում են նույն ընդհանուր տարածքում;
- է. ԱԳԱՄ-ի ստեղծման ընթացքում օգնի ընդունող/շահառու երկրին ձևակերպելու տեխնիկական հետազոտության, այդ թվում ՈԱ և ՈՀ ազգային չափորոշիչները:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Մակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա) ՀԱԳՄՉ 08.10 Ականազերծման գործողությունների ընդհանուր գնահատում;
- բ) ՀԱԳՄՉ 08.30 Հետականազերծման փաստաթղթեր;
- գ) ՀԱԳՄՉ 08.40 Ականների և ՉԶ նշագրում;
- դ) ՀԱԳՄՉ 09.10 Ականազերծման պահանջներ:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմինները ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ (Ճանաչողական) Տերմիններ, սահմանումներ և հասպալումներ

Տարածքի կրճատում

Գործընթաց, որի միջոցով ականապատված համարվող նախնական տարածքը (ՀԳԸՀ ընթացքում կատարված ընդհանուր հետազոտության կամ տեղեկությունների հավաքման այլ միջոցառումների արդյունքում) փոքրացվում է:

Նշում՝ Տարածքը կրճատելու համար կարող է անհրաժեշտ լինել ականագերծման որոշակի գործողություններ կատարել, ինչպես օրինակ մուտքի ուղիների բացում, անմիջական և անընդունելի վտանգ ներկայացնող ականների և ՉՁ ոչնչացում: Այդպիսի ոչնչացումը սովորաբար նպատակ ունի ստանալ ավելի վստահելի տեղեկություններ վտանգավոր տարածքի չափերի մասին: Սովորաբար արժե կայուն կամ կիսակայուն համակարգերով նշագրել մյուս վտանգավոր տարածքները:

Նշում՝ Նույն կերպ, տարածքի կրճատումը, երբեմն արվում է ականագերծման գործողության շրջանակներում:

Բ.1.

Նիվելիրային նշագիր

Մարդասիրական ականագերծման համատեքստում այս տերմինը նշանակում է ... ամրակցված տեղեկատու նշան, որն օգտագործվում է նշագրված վտանգի կամ վտանգավոր տարածքի տեղը գտնելու համար: Այն, սովորաբար պետք է տեղադրված լինի վտանգավոր տարածքից դուր կարճ հեռավորության վրա:

Նշում՝ Նիվելիրային նշագրի անհրաժեշտությունը կարող է չլինել, եթե կողմնորոշիչ ուղենիշը բավական մոտ է վտանգավոր տարածքի շրջագծին:

Բ.2.

Վտանգի (վնագավոր) տարածք

Ականապատ տարածք

Ընդհանուր տերմին է բոլոր այն տարածքների համար, որոնք չեն օգտագործվում ականների և որևէ այլ ՉՁ ենթադրվող կամ փաստացի առկայության պատճառով:

Բ.3.

ԱԳՏԿՀ

Ականագերծման գործողությունների տեղեկատվության կառավարման համակարգ (ԱԳՏԿՀ)

Նշում՝ Մա ՄԱԿ-ի կողմից օժանդակվող դաշտային ծրագրերի կարևորագույն սովալների կառավարման նպատակով ՄԱԿ-ի նախընտրված տեղեկատվական համակարգն է: Դաշտային մոդուլը (ԴՄ) նախատեսում է սովալների հավաքագրում, տեղեկությունների վերլուծություն և ծրագրի/նախագծի կառավարում: Այն կիրառվում է ականագերծման գործողությունների կենտրոնների (ԱԳԿ) կողմից կենտրոնական և տարածքային մակարդակներում և ականագերծման գործողությունների ծրագրեր իրականացնողների կողմից, ինչպես օրինակ ականագերծող կազմակերպությունները:

Բ.4.

Միջանկյալ կետ

Միմյանցից 50 մետր հեռավորությունը գերազանցող շրջադարձերի միջև օգտագործվող հետազոտության նշագրեր:

Բ.5.

Կողմնորոշիչ ուղենիշ

Ցամաքային ուղենիշ

Վտանգավոր տարածքից դուրս որոշ հեռավորության վրա տեղադրվող ամրակցված նշաձող: Այն պետք է լինի հեշտությամբ ճանաչվող և մշտական օգտագործման նշան (ինչպես օրինակ խաչմերուկներ, կամրջի կամարակալ), որը կարող է օգտագործվել մեկ կամ ավելի մեկնարկային կետեր տեղափոխվելու համար:

Նշում՝ Միջազգային պրակտիկայում դրանք հաճախ կոչվում են նաև գեոդոզիական կետեր և վերաբերում են նախահետազոտված տարածքներին, ինչպիսիք են օրինակ արգելակետերը:

Բ.6.

Հետազոտության նշագիր

Ամուր և դիմացկուն նշագիր, որն օգտագործվում է ականագերծման գործողությունների ժամանակ նշագրված և ականագերծման տարածքների պահպանմանն օժանդակելու նպատակով:


Բ.7.

Շրջադարձ

Գետնին ամրակցված կետ, որը ցույց է տալիս վտանգավոր տարածքի շրջագծի ուղղության փոփոխություն: Այն պետք է հստակորեն նշագրվի և գրանցվի: Հողում տեղադրված մետաղական առարկաները պետք է օգտագործվեն բոլոր շրջադարձերը նշագրելու համար՝ հետագայում մշտապես դրանցից տեղեկանալու նպատակով:

Հավելված Գ (Ճանաչողական) Տեխնիկական հետազոտություն անցկացնելու նկարագրող օրինակ


Գ.1. Տեխնիկական հետազոտությունը պետք է կատարվի ականագերման պահանջներն ավելի ճշգրիտ սահմանելու համար բավարար տեղեկություններ հավաքելու նպատակով: Այն ներառում է այն տարածքները, որոնք պետք է կրճատվեն, ականագերծվեն և/կամ նշագրվեն: Ստորև սխեմատիկ քարտեզ 1-ում բերված է իր սահմանների ներսում ականապատ վեց կասկածվող տարածք ունեցող գյուղի օրինակը: Դրանք հայտնաբերվել են գյուղաբնակների հետ զրուցելու արդյունքում: Կասկածվող տարածքները թույլ չեն տալիս, որ գյուղի բնակիչները ապրեն նորմալ կյանքով և զերծ լինեն ականների և ՉՁ վտանգից:



Գ.2. Տեխնիկական հետազոտության նախապլանավորման փուլում կասկածվող տարածքներից մեկում (քարտեզում նշված է որպես ԿՏ 2) նշված են ականների առկայության արդյունքում առաջացած խոչընդոտներ: Կասկածվող տարածքը փակում է մուտքը դեպի

ա. Արոտավայր. Հայտնաբերված ԿՏ-ը գտնվում է այլ գյուղատնտեսական հողերի հենց կենտրոնում և +/- 12 500 մ² տարածքը հնարավոր չէ օգտագործել որպես արոտավայր:

բ. Խմելու ջրի աղբյուր. Գյուղացիները պետք է շրջանցեն վտանգավոր տարածքը՝ այն ուղղակիորեն հասելու փոխարեն, որպեսզի կարողանան օգտվել գյուղը



Խմելու ջրով ապահովող աղբյուրից:

գ. Բարձր լարման գիծ: Էլեկտրական հոսանքի գիծը վնասվել է պատերազմի ժամանակ և բարձր լարման գծի տակ գտնվող տարածքը պետք է ակննազերծվի, որպեսզի հնարավոր լինի վերականգնել հոսանքի մատակարարումը և էլեկտրասայունները:


Գ.3. Մեկնարկային փուլում պարզաձև ճանապարհը և սահմանաձև նիվելիրագին նշագիրն օգտագործելով տեխնիկական հետազոտության թիմը պետք է վերլուծի ականների առաջացրած խոչընդոտները և առաջարկի լուծումներ՝ խնդրո առարկա տարածքը նշագրելու, կրճատելու և/կամ ակննազերծելու միջոցով իրավիճակը լուծելու համար: Այսպիսի նախապլանավորումը արվում է նախքան տեխնիկական հետազոտությունը: Այդ նպատակով վերլուծվում է առկա ամբողջ տեղեկատվությունը և կազմվում է նախնական պլան: Այնուհետև հետազոտությունը կենտրոնանում է ճշգրիտ տվյալների հավաքման վրա, որը թույլ կտա վերջնական տեսքի բերել պլանը: Հարկավոր է նախատեսել նաև դեպի կասկածվող տարածք հետազոտության արահետների ստեղծումը: Այս արահետների նպատակն է անվտանգ մուտք ապահովել կասկածվող տարածք՝ կոնկրետ տեղեկություններ հավաքելու համար, որը կարող է օգտագործվել տեղանքի մանրամասն պլան կազմելու համար: Արահետների թիվը և գտնվելու վայրը կախված է տեղեկատվական պահանջներից: Այս կոնկրետ դեպքում ականների ազդեցությունը վերացնելու մի շարք լուծումներ կան: Հնարավորություններից մեկը տարածքը հետևյալ կերպ օգտագործելն է՝

ա. Արոտավայր. Կախված լանդշաֆտից, բուսականությունից և ականների սպառնալիքից, հնարավոր է դիտարկել մեքենաների կամ վարձեցված շների օգտագործումը տարածքում: Կասկածվող տարածքի ստորին աջ մասը կարող է ցանկապատվել կամ ակննազերծվել ձեռքով:

բ. Խմելու ջուր. Որպես առաջին քայլ կարելի է անվտանգ արահետ բացել կասկածվող տարածքում, որը հնարավորություն կտա գյուղացիներին օգտվել ջրի աղբյուրից:


գ. Բարձր լարման գիծ. Քանի որ այն արոտավայրի համար անհրաժեշտ տարածքի մասն է, հեռագրասայունները և հոսանքի գծի շուրջ եղած տարածությունը պետք է ակննազերծվեն բուն արոտավայրի ակննազերծման ընթացքում: Գուցե հարկ լինի կիրառել այլ եղանակ՝ գետնի վրա մետաղի ջարդոնի և հոսանքի լարերի պատճառով:

Գ.4. Տեխնիկական հետազոտության նախապլանավորման այս վարժանքի համար տեխնիկական հետազոտություն կատարող խումբը պետք է հավաքի անհրաժեշտ տեղեկություններ՝ նախնական պլանը հաստատելու համար: Պլանավորման պահանջների իրականացման համար հարկավոր է արահետներ բացել դեպի կասկածվող տարածք, ինչպես ցույց է տրված սխեմատիկ քարտեզ 3-ում: Հետազոտության միջոցով հավաքագրվող տեղեկությունները կամ կհաստատեն նախնական պլանը կամ կհուշեն այն փոխելու անհրաժեշտության մասին:



Գ.5. Տեխնիկական հետազոտությունն ավարտելուց և տվյալները ականների տվյալների բազայում մուտքագրելուց հետո հարկավոր է կազմել վերջնական պլան տվյալ կոնկրետ տարածքի համար: Նույն գործընթացը պետք է կատարվի մյուս հինգ կասկածվող տարածքների համար: Այդ տարածքները, վերջում գուցե միավորվեն մեկ խմբում և ռեսուրսները կարող են համատեղ օգտագործվել և տեղափոխվել վեց տարածքների ներսում հիմքը պատրաստելու, կասկածվող տարածքը կրճատելու կամ ականապատ տարածքը ականազերծելու կամ նշագրելու համար:

Գ.6. Տեխնիկական հետազոտության արդյունքում հավաքագրված տեղեկությունների վերլուծության արդյունքում կազմվում է ականների սպառնալիքի վերացման պլան: Վերջինիս հիմնական նպատակը համայնքի վրա ականների և ՉՁ ազդեցության վերացումն է: Հնարավոր տարբեր լուծումներից մեկը գծապատկերի տեսքով ներկայացված է սխեմատիկ քարտեզ 4-ում: Պլանը պետք է ապահովի, որ կասկածվող ամբողջ տարածքը ընդգրկված լինի, իսկ խումբը պատասխանատու լինի ամբողջ տարածքի համար:



Սակրավորների /ձեռքով/ կամ վարժեցված շների օգնությամբ ականագերծում ոչնչացված հոսանքի գծի երկայնքով:

Գերակայություն 1. Ապահովել անվտանգ ճանապարհի վտանգավոր տարածքով դեպի խմելու ջրի աղբյուր շների օգնությամբ կամ մեխանիկական միջոցներով:

Կասկածվող տարածքի մնացած մասի ականագերծում, հավանաբար մեխանիկական միջոցներով, այնուհետև շների օգնությամբ

Բլրոտ տարածքի ցանկապատում և նշագրում, որը հետո ականագերծվելու է

Գ.7. Նախապլանավորումը և տեխնիկական հետազոտությունը տեղեկություններ կտան, որոնք կօգնեն կազմել ականագերծման, ԱՎԻ և տուժածների օգնության աշխատանքային ծրագրեր (լավագույն դեպքում՝ տարեկան) և առաջադրանքի պահանջներ, որոնք կտրվեն հակաականային կազմակերպություններին, մասնավորապես ականագերծող կազմակերպություններին: Առաջադրանքի պահանջներում մանրամասն կնկարագրվեն ականագերծման պահանջները (տարածքը և խորությունը), տվյալ տարածքին առավելապես հարմար ռեսուրսների տեսակը և քանակը, ինչպես նաև աշխատանքների տևողությունը մինչև նախնական փուլում սահմանված ազդեցության վերացումը:

Հավելված Դ (Տեղեկատվական) Հետազոտական նշագրում

Դ.1. Հիմնական սկզբունքներ

Տեխնիկական հետազոտությունը նախատեսում է ֆիզիկական հետազոտության նշագրերի և ցուցիչների օգտագործում և արձանագրում՝ հետագա ականագրերձման գործողություններին օժանդակելու նպատակով: Քանի որ հետազոտությունը և ականագրերձումը կարող են իրականացվել տարբեր կազմակերպությունների կողմից, շատ կարևոր է, որ բոլոր երկրներում կատարվեն հետազոտական նույն նշագրումները: ԱԳԱՄ-ը պետք է մշակի և հրատարակի այդ չափորոշիչները: Այս Հավելվածում ներկայացված է անհրաժեշտ նշագրման տեսակների և որակի օրինակ: ԱԳԱՄ-ի բացակայության դեպքում հետազոտող կազմակերպությունը պետք է հաստատի նշագրման հետևյալ սխեման:

Գունեղ, պրակտիկ և աչք զարնող նյութերը կարող են տեղահանվել տեղի բնակչության կողմից, հատկապես արտակարգ իրավիճակների միջամտությունների դեպքում, երբ երկրում չլինեն ռեսուրսներ և նյութեր: Առ այդ, նշանները պետք է փոխարինվեն հեշտությամբ ճանաչվող և մշտական օգտագործման նշաններով (ինչպես օրինակ ներկված քարերից պատրաստված բուրգերը, պատերին կամ ծառերին նկարված նշանները): Ամենից կարևորն այն է, որ այդ նշանները լինեն հասկանալի, իսկ դրանց գտնվելու վայրը հնարավորինս հստակ նշված լինի վտանգավոր տարածքների քարտեզներում: Բացի այդ, սա նաև ավելի է կարևորում տեխնիկական հետազոտություն կատարած կազմակերպության կողմից տարածքի ֆիզիկական հանձնումը ականագրերձող կազմակերպությանը:

Այն դեպքերում, երբ հանձնում հնարավոր չէ, տեխնիկական հետազոտություն կատարած կազմակերպությունը պետք է պատասխանատու լինի նշագրման հաստատված և կայուն համակարգի կիրառումը և տեղական բնակչության կողմից դրանց ըմբռնումը ապահովելու համար:

Դ.2. Կողմնորոշող ուղենիշեր

Կողմնորոշող ուղենիշը (ԱԳՏԿՀ նյութերում կիրառվում է 'ցամաքային ուղենիշ' տերմինը) ամրակցված նշաձող է, որը տեղադրվում է վտանգավոր տարածքից դուրս որոշ հեռավորության վրա: Այն պետք է լինի հեշտությամբ ճանաչվող նշան (ինչպես օրինակ խաչմերուկներ, կամրջի կամարակալ), որը կարող է օգտագործվել մեկ կամ ավելի մեկնարկային կետեր տեղափոխվելու համար: Կողմնորոշիչ ուղենիշի կորդինատները հետազոտվում են GPS (տեղորոշման միջազգային համակարգի) կամ հետադարձ հաստման միջոցով:

Կողմնորոշիչ ուղենիշերը պետք է լինեն՝

- ա. պարզ տեսանելի 30մ-ից սովորական ցերեկային լուսով և մոտեցման նորմալ ուղղությամբ դիտելիս:

բ. Պատկերեն նշան, որը պարզորոշ կերպով տարբերվում է նշագրված տարածքի այլ նշաններից: Նշանը պետք է պարունակի տարբերակիչ եզակի համար և ցույց տա հեռավորությունը նիվելիրային նշագրից և կորդինատները: Տվյալները պետք է լինեն դրվագված, դաջված, փորագրված կամ որևէ այլ պերմանենտ ձևով տպված: Նշանը պետք է փակցված լինի մակերեսին կամ ամրացված ձողին/սյանը գետնից 1.25մ բարձրության վրա:



Գծապատկեր 1: Կողմնորոշող ուղենիշ

Գծապատկեր 1-ում ներկայացված է նշան, որը ցույց է տալիս, որ թիվ 1001 ականադաշտի կողմնորոշիչ ուղենիշը գտնվում է սվյալ կետից 200մ հեռավորության վրա՝ մագնիսային կողմացույցի 130° տակ:


Դ.3. Նիվելիրային նշագրեր

Նիվելիրային նշանգիրը ամրակցված տեղեկատու նշան է, որն օգտագործվում է նշագրված վտանգի կամ վտանգավոր տարածքի տեղը գտնելու համար: Այն, սովորաբար հարկավոր է տեղադրել վտանգավոր տարածքից դուրս կարճ հեռավորության վրա:

Նիվելիրային նշանգիրը պետք է՝

- ա. հետազոտվի հետադարձ հատման կամ ՏՄՀ միջոցով;
- բ. պարզ տեսանելի լինի 30մ-ից սովորական ցերեկային լուսով և մոտեցման նորմալ ուղղությամբ դիտելիս; և
- գ. պատկերի նշան, որը պարզորոշ կերպով տարբերվում է նշագրված տարածքի այլ նշաններից: Նշանը պետք է ներառի տարբերակման եզակի համար: Տվյալները պետք է լինեն դրվագված, փորագրված կամ որևէ այլ պերմանենտ ձևով տպված: Նշանը պետք է փակցված լինի մակերեսին կամ ամրացված ձողին/սյանը գետնից 1.25մ բարձրության վրա:

Գծապատկեր 2: Նիվելիրային նշագիր



Նշում. Գծապատկեր 2-ում ներկայացված է նշան, որը ցույց է տալիս թիվ 1001 ականադաշտի նիվելիրային նշագիրը:


Դ.4. Շրջադարձեր

Շրջադարձը գետնի վրա ամրակցված կետ է և ցույց է տալիս վտանգավոր տարածքի շրջագծի ուղղության փոփոխություն:

Շրջադարձը պետք է՝

- a) հետազոտվի հետադարձ հատման կամ ՏՄՀ միջոցով, իսկ կորդինատները պետք է պաշտոնապես գրանցվեն;
- b) պարզ տեսանելի 30մ-ից սովորական ցերեկային լուսով և մոտեցման նորմալ ուղղությամբ դիտելիս;
- c) նշագրվի երեք հետազոտական նշագրումներով՝ մեկը ուղղությունը փոխելու մասում, իսկ մյուսը շրջագծի յուրաքանչյուր կողմում: Նշագրերը պետք է տեղադրվեն միմյանցից 1.0մ հեռավորության վրա, լինեն հստակորեն նշագրված և գրանցված: Հողում թաղված մետաղական առարկաները կարող են օգտագործվել բոլոր շրջադարձերի նշագրման համար՝ հետագայում մշտական դրանցից տեղեկանալու նպատակով;
- d) պատկերի նշան, որը պարզորոշ կերպով տարբերվում է նշագրված տարածքի այլ նշաններից: Տվյալները պետք է լինեն դրվագված, փորագրված, դաջված կամ որևէ այլ պերմանենտ ձևով նշված: Նշանը պետք է փակցված լինի մակերեսին կամ ամրացված ձողի/սյան գետնից 1.25մ բարձրության վրա:

Նշում. Տեխնիկական հետազոտության ժամանակ սահմանները ցույց տալու համար օգտագործվող նշագրերը գուցե հարկավոր լինի հանել ականազերծումն ավարտելուց և իրական սահմաններն իմանալուց հետո, ուստի տեխնիկական հետազոտության նշագրերի պերմանենտության աստիճանը կախված է այն բանից, թե հետազոտությունն ավարտելուց հետո որքան շուտ է արվելու ականազերծումը:



Գծապատկեր 3: Շրջադարձային նշագրի օրինակ

D.5. Միջանկյալ կետեր

Միջանկյալ կետերի ընդհանուր տեղակայումը պետք է պաշտոնապես գրանցվի, թեև ճշգրիտ կորդինատներ չեն պահանջվում:


Միջանկյալ կետերը հարկավոր չէ նշագրել առանձին նշանով:

Հավելված Ե (Ճանաչողական) Տեխնիկական հետազոտությունների համար ԱԳՏԿՀ կիրառման ուղեցույց

ԱԳՏԿՀ. Մա ՄԱԿ-ի կողմից օժանդակվող դաշտային ծրագրերի կարևորագույն տվյալների կառավարման նպատակով ՄԱԿ-ի նախընտրված տեղեկատվական համակարգն է: ԱԳՏԿՀ նախատեսում է տվյալների հավաքագրում, տեղեկությունների վերլուծություն և նախագծի կառավարում: Այն կիրառվում է ականագերծման գործողությունների կենտրոնների կողմից կենտրոնական և տարածքային մակարդակներում և ականագերծման գործողությունների ծրագրեր իրականացնողների կողմից, ինչպիսիք են օրինակ ականագերծող կազմակերպությունները:

Տեխնիկական հետազոտություն. Տեխնիկական հետազոտությունը վտանգի հայտնի կամ կասկածվող տարածքների մանրամասն տեխնիկական և տոպոգրաֆիկ հետազոտություն է: ԱԳՏԿՀ հնարավորություն է տալիս օգտագործողներին օգտվել /մուտք գործել/, պահեստավորել և հանել այդպիսի հետազոտությունների մասին տեղեկություններ՝ ճկուն ձևով օգտագործելով օգտագործողի գրաֆիկական ինտերֆեյսը (GUI): Տեխնիկական հետազոտության մասին տվյալների մուտքագրման, պահեստավորման և որոնման միջև կապը ներկայացված է Գծապատկեր 1-ում:

Annex D



Գծապատկեր 1: ԱԳՏԿՀ ՀՄ. Տեխնիկական հետազոտության տվյալների մուտքագրում, պահեստավորում և որոնում

Տվյալների մուտքագրում. Տեխնիկական հետազոտության մասին տվյալների մուտքագրման համար սովորաբար կիրառվում են հետևյալ երկու փաստաթղթերը՝ Ականապատ դաշտի մասին հաշվետվությունը և Տեխնիկական հետազոտության հաշվետվությունը: Հաշվետվությունների ԱԳՏԿՀ-ում սահմանված ձևաչափերը կարող են օգտագործվել ներկայացված տեսքով կամ համապատասխանեցվել տեղական կարիքներին:

Ականապատ դաշտի մասին հաշվետվությունը թույլ է տալիս օգտագործողին մուտքագրել տվյալներ վտանգների վերաբերյալ (տեսակը, հաճախականությունը, ականների/ՉԶ տեղադրման խորությունը և վտանգների նշագրման համակարգերը), ֆիզիկական հետազոտության նշագրերի (կողմնորոշման ուղենիշների և նիվելիրային նշագրերի) գտնվելու վայրի, ականապատված տարածքի շրջագծի մասին տվյալներ (շրջադարձի և միջանկյալ կետեր) և լանդշաֆտի մասին տեղեկություններ (գրունտի տեսակը, ցամաքային պրոֆիլը, գոգավորությունը, դրենաժը, բուսական ծածկույթը և ականապատումը/խոչընդոտները): Բացի այդ, հաշվետվությունը թույլ է տալիս մուտքագրել այլ հարակից տեղեկություններ, ինչպես օրինակ մուտքը, հողի նպատակային օգտագործումը, տեղական բուժհաստատությունների գտնվելու վայրերը:

Տեխնիկական հետազոտության հաշվետվությունը օգտագործողին թույլ է տալիս մուտքագրել լրացուցիչ տեղեկություններ, երբ երկու կամ ավելի ականապատ տարածքներ միմյանց մոտ են գտնվում և դիտարկվում են որպես մեկ առաջադրանք կամ նախագիծ:

Տեխնիկական հետազոտությունը կարող է վերաբերել ԱԳՏԿՀ-ում նախկինում գրանցված տարածքներին՝ որպես ՀԱԳԸԳ մաս կամ ներառված Վտանգավոր տարածքների մասին հաշվետվությունում կամ Ականապատված տարածքի մասնագրում: Այսպիսի դեպքերում, կարևոր է կիրառել նույն հղումը (օրինակ ականապատ տարածքի համարը): Նավիգատորի և ԱԳՏԿՀ ԱՏՀ գործառնություններն օգնում են օգտագործողին գտնելու համապատասխան և անհրաժեշտ հաշվետվությունները և մասնագրերը:

Տվյալների պահեստավորում. Տեղեկությունները պահվում են ԱԳՏԿՀ տվյալների բազայի Տեխնիկական հետազոտության աղյուսակներում: Լրացուցիչ հարակից տեղական տեղեկությունները կարող են պահվել ԱԳՏԿՀ տվյալների բազայի այլ աղյուսակներում, օրինակ կոնտակտների, գտնվելու վայրի կամ երկրի մասին տեղեկատվական աղյուսակներում:

Տվյալների որոնում. Տվյալները կարող են փնտրվել Տեխնիկական հետազոտության մասին հաշվետվություններում և համապատասխան Ականապատ դաշտի մասին հաշվետվություններում: Ընթացիկ հաշվետվությունները նույնպես կարող են տեղեկություններ տալ տեխնիկական հետազոտության մեջ հիշատակված ականապատ տարածքներում կատարված և ընթացիկ աշխատանքների մասին: Այդպիսի տեղեկություններից են օրինակ ականագերծված տարածքները (տարածքի/սահմանների կրճատման գործընթացի շրջանակներում), հետազոտության ժամանակ վնասագերծված կամ նշագրված սարքերը և հետազոտության գործընթացի այլ տվյալներ, ինչպես օրինակ օգտագործված ռեսուրսները:

Հաշվետվական և վերլուծական գործիքներ. ԱԳՏԿՀ-ում կան նախասահմանված հաշվետվություններ, որոնք օգտակար են տեխնիկական հետազոտության ընթացքում հավաքագրած տվյալների ամփոփման համար: ԱԳՏԿՀ ԱՏՀ գործառնությունները ներառում են վերլուծական գործիքները, որոնք օգնում են տվյալների բազայի օգնությամբ կազմել ականագերծման պլաններ:

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի: ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1.12.2004թ	1. Փոփոխությունների ձևաչափի որոշում 2. Տեքստի փոքր խմբագրական փոփոխություններ 3. Տերմինների, սահմանումների և հապավումների փոփոխություններ՝ ըստ անհրաժեշտության, ապահովելու համար, որ այս ՀԱԳՄՉ համահունչ է ՀԱԳՄՉ 04.10 հետ